PLITONIT չոր նախաներկ
Նախաներկ խտանյութ 1:15

- ✓ Մինչև 10 լիտր օգտագործման համար պատրաստի նախաներկ
- ✓ Բարձրացնում է կպչունությունը հետագա ծածկույթներին
- ✓ Հիմքի ջրակլանման նվազեցում նույնիսկ մեկ շերտով քսելու դեպքում
- ✓ Տնտեսող է օգտագործման մեջ
- ✓ Չորանալիս՝ անգույն

PLITONIT Plitonit Deutsche Qualität

ՀԵՇՏ Է ԼԻՆԵԼ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ

Նախաներկ ներքին և արտաքին աշխատանքների համար

Ներբեռնել հրահանգը այլ լեզվով/
Download the manual in another language
kz | az | uz | tj | kg | tm | am | ge | mn

Կիրառման հատվածը

PLITONIT չոր նախաներկը նախատեսված է հեղուկ նախաներկերի պատրաստման համար՝ ցեմենտային, ցեմենտա-կրային կամ գիպսային հիմքով պատերի, հատակների և առաստաղների, ինչպես նաև գիպսաստվարաթղթե սալիկների մակերեսները նախապատրաստելու համար՝ նախքան ցեմենտային կամ գիպսային հիմքով, ինչպես նաև պոլիմերային կապակցայնութով շաղախային խառնուրդների կիրառումը, ինչպես նաև նախքան ներկելը և պաստառապատելը՝ հիմքի փոշեհեռացման, ջրակլանման նվազեցման և շաղախային խառնուրդից խոնավության վաղաժամ արտահոսքը կանխելու նպատակով՝ ներքին և արտաքին աշխատանքներ իրականացնելիս:

Հետագա շերտերի տեսակները	Պատեր
Սալիկի և կերամոգրանիտի սոսինձ	+
Գիպսային, ցեմենտային կամ պոլիմերային հիմքով սվաղ/ծեփամածիկ	+
Ինքնահարթեցվող հատակներ՝ ցեմենտային, գիպսային կամ համալիր հիմքով	+
Էպոքսիդային հիմքով ինքնահարթեցվող հատակներ	—
Ներկ / պաստառ	+
Հիմքերի տեսակները	**Պատեր**
Բետոն, երկաթբետոն, բջջային բլոկներ, աղյուս, գիպսային, ցեմենտային կամ պոլիմերային հիմքով սվաղ/ծեփամածիկ, ակոսալեզվակային սալեր, ցեմենտային, գիպսային կամ համալիր հիմքով ինքնահարթեցվող հատակներ	+
Գիպսաստվարաթղթե սալեր, գիպսամանրաթելային սալեր, մագնեզիումական ապակեթելային սալեր	+
Ցեմենտա-տաշեղային սալեր, կողմնորոշված տաշեղային սալեր, նրբատախտակ	—
Թույլ և փշրվող հիմքեր (հին փշրվող սվաղներ, բետոնե հիմքեր և կիսաչոր պաստառներ՝ 10 ՄՊա-ից պակաս սեղմման ամրությամբ)	—

Հիմքի պատրաստում
Նախքան նախաներկելը, մակերեսը մաքրեք փոշուց, կեղտից և քսուքից: Ծածկույթի հին և չամրացված հատվածները պետք է զգուշորեն հեռացվեն:

Աշխատանքների կատարման կարգը

1	Պատրաստե՛ք հեղուկ նախաներկ՝ համաձայն «Պատրաստման եղանակը» բաժնի
2	Նախաներկը հիմքին քսե՛ք վրձնով կամ գլանաձողով: Հորիզոնական մակերեսները նախաներկելիս թո՛ւյլ մի՛ տվեք լճակների առաջացում:
3	Նախաներկի քսումից 120 րոպե (կամ ավելի) անց ստուգե՛ք հիմքի ներծծողունակությունը. եթե հիմքի ներծծողունակության մակարդակը բավարար է (ջրի կաթիլը հորիզոնական հիմքի մեջ չի ներծծվում 15 րոպեից ավելի, կամ ուղղահայաց հիմքի դեպքում՝ այն ամբողջությամբ հոսում է վար՝ առանց ներծծվելու), կարելի է անցնել հետագա աշխատանքներին (տե՛ս «Ինչպես ստուգել հիմքի ներծծողունակությունը» բաժինը):
!	Եթե մեկ շերտ նախաներկելուց հետո հիմքի ներծծողունակությունը մնում է բարձր, ապա կատարե՛ք երկրորդ շերտի նախաներկում:

Պատրաստման եղանակը
Հեղուկ նախաներկ պատրաստելու համար անհրաժեշտ է PLITONIT Չոր նախաներկը խառնել ջրի հետ:
Նոսրացման աստիճանը՝ 1:10 (մեկ մաս նախաներկին՝ 10 մաս ջուր՝ ըստ քաշի)՝ խիստ ներծծող հիմքերի համար (գազաբետոն, փրփրաբետոն, կերամզիտաբլոկներ, գիպսային սվաղներ, ակոսալեզվակային գիպսե սալեր և այլն), կամ 1:15՝ ցեմենտային հիմքերի, գիպսաստվարաթղթե սալերի, խոնավադիմացկուն գիպսաստվարաթղթե սալերի, ապակեմագնեզիտային թերթերի համար:

Նախաներկի պատրաստումը կատարե՛ք մեխանիկական եղանակով՝ օգտագործելով շաղափ՝ համապատասխան կցորդով, ոչ ավելի, քան 600 պտ/րոպե արագությամբ:
Խառնումը կատարե՛ք 20-30 վայրկյան, թողե՛ք հանգստանա 5 րոպե և կատարե՛ք կրկնակի խառնում:
Պատրաստված նախաներկի օգտագործման ժամանակը մոտավորապես 240 րոպե է:
Օգտագործման ընթացքում խորհուրդ է տրվում պարբերաբար խառնել նախաներկը՝ ոչ պակաս, քան յուրաքանչյուր 60 րոպեն մեկ, մեխանիկական եղանակով:

Ինչպե՞ս ստուգել հիմքի ներծծողունակությունը

Հորիզոնական մակերեսի վրա	Ուղղահայաց մակերեսի վրա
Մակերեսը նախաներկելուց 120 րոպե (կամ ավելի) անց հիմքի տարբեր հատվածներում մի քանի կաթիլ ջուր կաթեցրե՛ք	Ցրցանով, վրձնով կամ սպունգով առատորեն ջուր քսե՛ք հիմքին՝ հատակից մոտավորապես 1,5 մ բարձրության վրա
Եթե կաթիլը հիմքի մեջ է ներծծվել 20 րոպեից պակաս ժամանակում, անհրաժեշտ է քսել նախաներկի երկրորդ շերտը	Եթե պատի վրայով հոսող ջուրը լիովին ներծծվել է հիմքի մեջ, անհրաժեշտ է քսել նախաներկի երկրորդ շերտը
Եթե կաթիլը հիմքի վրա մնում է 20 րոպեից ավելի և չի ներծծվում, կարելի է անցնել հետագա աշխատանքներին:	Եթե ջուրը հոսել է և չի ներծծվել, կարելի է անցնել հետագա աշխատանքներին

Տեխնիկական բնութագրեր

Գույնը (չոր և նոսրացված վիճակում)	Սպիտակ
Գույնը հիմքի վրա՝ քսելուց հետո	Անգույն
Չորացման ժամանակը, րոպե	60 – 120
Ծախսը՝ 1 մ²-ի համար, մլ (նոսրացված նախաներկի)	100 - 200
Ջրով նոսրացման աստիճանը	**Հարաբերա**
Ուժեղ ներծծող հիմքերի (գազաբետոն, փրփրաբետոն, կերամզիտաբլոկներ, գիպսային սվաղներ, գիպսային սալեր և այլն) նախաներկման համար	1:10
Ցեմենտային հիմքերի, գիպսաստվարաթղթե սալերի, խոնավակայուն գիպսաստվարաթղթե	1:15

Աշխատանքի կատարման պայմանները
Աշխատանքների ընթացքում օդի, հիմքի և պատրաստի նախաներկի ջերմաստիճանը պետք է լինի +5°C-ից ոչ պակաս: Արտաքին աշխատանքներ կատարելիս մշակված մակերեսը անհրաժեշտ է պաշտպանել մթնոլորտային տեղումներից՝ մինչև դրա լիովին չորանալը:

Ուշադրություն
Աշխատանքների ընթացքում խորհուրդ է տրվում նախաներկը պարբերաբար խառնել (ոչ պակաս, քան յուրաքանչյուր 60 րոպեն մեկ): Գործիքներն ու տարաները օգտագործելուց անմիջապես հետո լվանալ ջրով: Նշված բնութագրերը վավեր են 20±2°C շրջակա միջավայրի ջերմաստիճանի, 60±10% օդի հարաբերական խոնավության դեպքում: Աշխատանքներ կատարելիս պետք է առաջնորդվեք ընդհանուր շինարարական աշխատանքների կատարման հրահանգներով և շինարարության մեջ անվտանգության տեխնիկայով: Թույլ և փոշոտող հիմքերի (հին փոշոտող սվաղներ, բետոնե հիմքեր և կիսաչոր հատակներ, որոնց սեղմման ամրությունը 10 ՄՊա-ից պակաս է) նախաներկման համար խորհուրդ է տրվում օգտագործել PLITONIT Ամրացնող նախաներկ PROFI նախաներկը:

Նախազգուշական միջոցներ

Աշխատանքների կատարման ընթացքում օգտագործե՛լ ձեռնոցներ, պաշտպանիչ ակնոցներ, շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ
Խուսափել խառնուրդի աչքերի մեջ ընկնելուց: Աչքերի մեջ ընկնելու դեպքում անհապաղ լվանալ դրանք մեծ քանակությամբ ջրով և դիմել բժշկի
ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ!

Բաղադրություն՝

Վերադիսպերգվող պոլիմերային փոշի, ռեոլոգիական ֆունկցիոնալ հավելումներ, հանքային լցանյութեր, պիգմենտներ

Փոխադրում և պահպանում

Նախաներկը փոխադրվում է ցանկացած տեսակի տրանսպորտով՝ տվյալ տրանսպորտի տեսակի համար գործող բեռների փոխադրման կանոններին համապատասխան:

Փոխադրման կիրառվող եղանակները պետք է բացառեն մթնոլորտային տեղումների ներթափանցումը, ինչպես նաև ապահովեն փաթեթավորման պաշտպանությունը մեխանիկական վնասվածքներից և ամբողջականության խախտումից:
Պահել արտադրողի փաթեթավորման մեջ, որն ապահովում է արտադրանքի պաշտպանությունը խոնավանալուց և տեսքի կորստից, տարբեր տեսակի պահեստային տարածքներում՝ ջեռուցման սարքերից առնվազն 1 մ հեռավորության վրա: Արտադրողի տարայի մեջ պահպանման ժամկետը 12 ամիս է:

Արտադրողի երաշխիքներ

Արտադրողը երաշխավորում է, որ մաստիկը համապատասխանում է ՏՊ 2241-001-51552155-2013 պահանջներին, պայմանով, որ սպառողը պահպանի փոխադրման, պահպանման պայմանները և սույն հրահանգների ցուցումները: Արտադրողը պատասխանատվություն չի կրում նյութի հետ աշխատելու տեխնոլոգիային չհետևելու, ինչպես նաև սույն հրահանգներով չնախատեսված նպատակների և պայմանների համար դրա օգտագործման համար:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

8 (800) 555 - 71 - 67

www. plitonit.ru

e-mail` info@mc-bauchemie.ru